ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

13.08.2021
347-92

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
Ռոմանոս Պետրոսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պետրոսյան,

2021 թվականի հուլիսի 13-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյդոյանը դիմել էր Ձեզ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի ֆեյսբուքի պաշտոնական էջին գրելով հետևյալը.

«Արագածի Քարե լճի ափամերձ հատվածը «զավթած է» ինչ-որ մեկի ռեստորանի պարսպով, եւ փաստացի մարդիկ չեն կարող անմիջապես մոտենալ լճին դրա առջեւի հատվածում: Լճի ափամերձ պատվածը հանրային սեփականություն է: Որքա՞ն է օրինական լճի անմիջապես աճին կառուցել պարիսպ՝ փակելով մարդկանց ճանապարհը»:

2021 թվականի հուլիսի 14-ին նախարարի ֆեյսբուքի պաշտոնական էջի միջոցով ստացվել է հետևյալ պատասխանը. «Տիկին Դոյդոյան, շնորհակալ եմ ահազանգի համար: Նախարարության համապատասխան ստորաբաժանումն իմ հանձնարարականով համապատասխան գրություն կուղարկի Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին՝ դեպքը մանրամասն ուսումնասիրելու և հանգամանքները պարզելու համար»:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1.Ուղարկվե՞լ է արդյոք Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին գրություն՝ դեպքը մանրամասն ուսումնասիրելու և հանգամանքները պարզելու համար:

2. Անցած 30 օրերի ընթացքում ի՞նչ քայլեր է ձեռնարկել լիազոր մարմինը խախտումը բացահայտելու և այն դադարեցնելու ուղղությամբ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am